

Ք. Գյումրի

Մարտ 2023թ.

Արտյոմ Դավթյան Ա/2 Գյումրի Հյուրանոց (այսուհետ՝ Պրինցիպալ), ի դեմս տնօրեն Արտյոմ Դավթյանի -ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից «Մեդս Գյումրի 2023 ճարտարապետամշակութային» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Գործակալ), ի դեմս տնօրեն Մարիամ Արշակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, միասին կանվանվեն Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացությունները՝

– Պրինցիպալ՝ Արտյոմ Դավթյան Ա/2-ն Գյումրի Հյուրանոց-ն, որը հանդես է գալիս որպես հյուրանոցային տնտեսության օբյեկտի սեփականատեր կամ վարձակալ, որը գտնվում է ք.Գյումրի, Գարեգին Նժդեհ 5/10 հասցեում,

– Գործակալ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը իրականացնում է Պրինցիպալի կողմից մատուցվող՝ սույն պայմանագրի 1.2 կետում նշված հյուրանոցային և այլ նմանատիպ ծառայությունների ամրագրում և վաճառք,

– երրորդ կողմ (Հաճախորդ)՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ցանկանում և ստանում է Պրինցիպալի կողմից մատուցվող՝ սույն պայմանագրի 1.2 կետում նշված հյուրանոցային և այլ նմանատիպ ծառայություններ

– հյուրանոցային ծառայություններ՝ հյուրանոցային ծառայությունների մատուցման Կանոնակարգի համաձայն մատուցվող ծառայություններ, որոնք թվարկված են թիվ 1 հավելվածում

– այլ Ծառայություններ՝ Թիվ 1 հավելվածում նշված այլ ծառայություններ,

– հյուրանոցային ծառայության պատվեր՝ Գործակալի կողմից էլ-փոստի, կարճ հաղորդագրության կամ փոստի միջոցով ներկայացվող պատվեր, որտեղ նշվում են ժամանողների տվյալները և այն ծառայությունները, որոնցից ցանկանում է օգտվել հաճախորդը,

– Ուղեգիր՝ Գործակալի կողմից հաճախորդին տրվող փաստաթուղթ, որտեղ նշված են հյուրերի անուն ազգանունները, ամրագրման ամսաթիվը, ժամանման և վերադարձի ամսաթվերը, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտի անվանումը և հասցեն:

– հաշվարկային փաստաթուղթ՝ Պրինցիպալի կողմից Գործակալին ներկայացվող՝ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջները բավարարող փաստաթուղթ (Բացառությամբ հարկային հաշիվների մնացած բոլոր հաշվարկային փաստաթղթերում պարտադիր կերպով նշվում է նաև Գործակալին տրվող վարձատրության չափը):

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Գործակալը պարտավորվում է Գործակալի հանձնարարությամբ, Պրինցիպալի անունից և Պրինցիպալի հաշվին, վարձատրության դիմաց, իրացնել Պրինցիպալի կողմից մատուցման ենթակա՝ Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները:

1.2 Մատուցվող ծառայությունների ցանկը և դրանց արժեքները ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

1.3 Սույն պայմանագրով Գործակալին վերապահվում է Պրինցիպալի անունից գործարքների կնքման ընդհանուր լիազորություն, այն է՝ երրորդ կողմի (Հաճախորդի) հետ ինքնուրույն քաղաքացիաիրավական հարաբերությունների ձևավորման հնարավորություն:

2. Գործակալության իրականացման կարգը

2.1 Հավելված 1-ում նշված հյուրանոցային ծառայության պատվերը Գործակալը պարտավոր է ներկայացնել նախապես՝ էլ-փոստի, կարճ հաղորդագրության կամ փոստի միջոցով, որտեղ նշվում են հյուրանոց ժամանող անձանց քանակը, պատվիրվող սենյակների քանակը, տեսակը և հյուրանոցային ծառայությունների մատուցման ժամկետները և արժեքները:

Պատվերը հաստատված է համարվում Պրինցիպալի կողմից պատվերի հաստատումը սույն կետում նշված կապի միջոցներից որևէ մեկով ուղարկելու պահից, որը Պրինցիպալը պարտավոր է անել պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2 Մինչև հյուրերի ժամանումը պետք է հաստատված լինեն հետևյալ կետերը՝

- ժամանողների քանակը,
- համարների քանակը, տեսակը,
- սնունդը (նախաճաշ, ճաշ, ընթրիք),
- ժամանման ամսաթիվը և ժամը,
- հյուրերի անվանացանկը:

2.3 Պատվերի հաստատումից հետո Գործակալը հաճախորդին է տրամադրում ուղեգիր, որով հաճախորդը պետք է ժամանի ուղեգրում նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտ:

3. Փոխադարձ հաշվարկների կարգը

3.1 Ուղեգրում նշված ծառայությունների մատուցման ժամկետի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Պրինցիպալը Գործակալին է ներկայացնում էլեկտրոնային հաշվարկային փաստաթուղթ մատուցած ծառայությունների վերաբերյալ:

3.2 Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները մատուցված են համարվում Պրինցիպալի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերը Գործակալի կողմից ստորագրությամբ հաստատելու պահից:

3.3 Պայմանագրի 1.1 կետում նախատեսված Ծառայությունները Գործակալը մատուցում է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում նշված վարձատրության (միջնորդավճարի) դիմաց, իսկ այդպիսին չլինելու դեպքում Գործակալի համար վարձատրություն է համարվում Հավելված 1-ում նշված Գործակալին տրվող գների և Պրինցիպալի կողմից հայտարարագրված գների տարբերությունը:

3.4 Ծառայությունների մատուցման արժեքը Հաճախորդի կողմից փոխանցվում է Գործակալի բանկային հաշվին կամ վճարվում է վերջինիս դրամարկդ, որը Գործակալը պարտավոր է փոխանցել Պրինցիպալին, համաձայն Պրինցիպալի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերի՝ ետ պահելով Պայմանագրի 3.3 կետում նշված միջնորդավճարը:

4. Գործերի իրավունքներն ու պարտականությունները

4.1 Գործակալը իրավունք ունի.

4.1.1 Պրինցիպալից պահանջել ստանձնած ծառայությունների պատշաճ մատուցում:

4.1.2 Պատվերն ընդունելուց հետո ծառայությունները ոչ պատշաճ մատուցելու և Պայմանագրի 4.2.7 կետով սահմանված ժամկետում Պրինցիպալին գրավոր տեղեկացնելու և այդ թերությունները Պրինցիպալի կողմից ողջամիտ ժամկետում չշտկելու դեպքում Պրինցիպալից պահանջել դրա հետևանքով կրած վնասի հատուցում:

4.1.3 Պահանջել Պրինցիպալից տեղեկատվություն հյուրանոցային ծառայությունների և դրանց փոփոխությունների վերաբերյալ:

4.1.4 Պրինցիպալի կողմից նշված թույլատրելի սահմաններում և նախապես Պրինցիպալին տեղեկացնելով ամրագրման հայտում կատարել փոփոխություններ:

4.2 Գործակալը պարտավորվում է.

4.2.1 Իրացնել Պրինցիպալի կողմից մատուցվող ծառայությունները:

4.2.2 Տրամադրել Հաճախորդին ճշգրիտ տեղեկատվություն մատուցվող ծառայությունների առանձնահատկությունների վերաբերյալ:

4.2.3 Ժամանակին տրամադրել ուղեգիր հյուրանոցային համալիրում հյուրերի գրանցման ժամանակ ներկայացնելու համար:

4.2.4 Անհատական պատվերի դեպքում անձանց չժամանելու կամ ծառայությունից այդ անձանց կամ Գործակալի հրաժարվելու դեպքում ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման մեկնարկից 1 օր առաջ, այդ մասին տեղեկացնել Պրինցիպալին:

4.2.5 Պրինցիպալի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերը ստորագրությամբ չհաստատելու դեպքում 3 բանկային օրվա ընթացքում Պրինցիպալին ներկայացնել ծառայությունները (կամ դրանց մի մասը) չնդունելու վերաբերյալ գրավոր հիմնավորում:

4.2.6 Պայմանագրով և Գործակալի պատվերով չնախատեսված լրացուցիչ ծառայությունների դիմաց վճարել Պրինցիպալին, եթե այդ ծառայությունները համաձայնեցված են եղել Գործակալի կողմից:

4.2.7 Գործակալը պարտավորվում է ոչ պատշաճ կերպով մատուցված ծառայություններ ստանալու դեպքում գրավոր տեղեկացնել Պրինցիպալին, այդ ծառայությունները ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում:

4.2.8 Գործակալի կողմից Պայմանագրի շրջանակներում պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում Պրինցիպալին հատուցել վերջինիս կրած փաստացի վնասները:

4.3 Պրինցիպալը իրավունք ունի.

4.3.1 Գործակալի պատվերը ստանալուց 7 աշխատանքային օրվա ընթացքում մերժել պատվերի ընդունումը՝ պատվերում նշված ժամանակահատվածում ազատ համարների բացակայության հիմքով:

4.3.2 Սահմանված ժամկետում ստանալ վարձատրություն մատուցված ծառայության դիմաց:

4.3.3 Պայմանագրով և Գործակալի պատվերով չնախատեսված լրացուցիչ ծառայությունների դիմաց Գործակալից ստանալ վարձատրություն, եթե այդ ծառայությունները համաձայնեցված են եղել Գործակալի հետ:

4.4 Պրինցիպալը պարտավորվում է.

4.4.1 Տրամադրել ստորև նշված ծառայությունները.

- տեղավորում
- սնունդ
- այլ նախատեսված ծառայություններ

• 4.4.2 Գործակալին տրամադրել տեղեկատվություն հյուրանոցային ծառայությունների, գների և դրանց փոփոխությունների վերաբերյալ:

4.4.3 Ծառայությունները մատուցել անձամբ և պատշաճ որակով:

5. Ֆորս Մաժոր

5.1 Կողմերը պատասխանատվություն չեն կրում առողջությանը պատճառված վնասի համար, ինչպես նաև Գործակալին չմատուցված վճարված ծառայությունների համար, եթե այդ վնասը հասցվել է բնական աղետների, պատերազմի, երկրաշարժի, հրդեհի, ջրհեղեղի, ըստ սույն Պայմանագրի Կողմերի պարտավորությունների կատարմանը խոչընդոտող պայմաններով: Ցանկացած ֆորս-մաժորային իրավիճակի առկայության մասին տեղեկություն ստանալու դեպքում, որը ուշացնում է կամ խոչընդոտում է Պայմանագրի համաձայն պատվերի կատարումը, Կողմերը պարտավորվում են գրավոր միմյանց տեղեկացնել:

6. Այլ դրույթներ

6.1 Սույն Պայմանագրից ծագող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.2 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծառայությունների կատարման վերջնաժամկետը:

6.5 Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն, երեք հավասարազոր օրինակից:

7. Չեղարկման դրույթները և պայմանագրի խախտման վերապայմանները

Հյուրանոցում ցանկացած սենյակ ամրագրելուց հետո Դուք ցանկացած պահի կարող եք չեղարկել այն, բայց մինչ այդ խնդրում ենք ուշադիր կարդալ բոլոր պայմանները:

Խնդրում ենք ամբողջությամբ ծանոթանալ չեղարկման քաղաքականությունը:

- 100% անվճար չեղարկում ժամանման օրվանից 20 օր առաջ
- Չեղարկամ ժամկետների խախտման դեպքում 30% փոխհատուցում Ձեր կողմից ուղղարկված ամրագրման համար :
- Մատուցվող ծառայությունները ենթակա են փոփոխման՝ ամրագրված պատվերի 25 % չափով:

8. Վճարման քաղաքականությունը

Հյուրանոցային ծառայությունների ամրագրումից և պայմանագրի կնքումից հետո՝ մինչև ս.թ. մայիսի 15-ը գործակալը պարտավորվում է վճարել նախնական ամրագրման ընդհանուր գումարի 30%, որը կվերանայվի վերջնահաշվարկի ժամանակ:

9. Կողմերի հասցեները և վավերապայմանները

ጥብረት ጥላ

«Արտյ ո մ Դավթյ ան Ա/Զ»

Հասցե՝ ք. Գյումրի, Գաբեգիև Նժդեհ 5/10

३५३३` 57396264

Բանկ՝ Ինտեկոբանկ

३/३` 2051232153651001

Հեռ.՝ +374-98-03-94-55

E-mail` gyumrihotel@mail.ru

Տնօրեն՝ Արտյոմ Դավթյան

ԳՈՐԾԱԿԱԼ

«Մեդա Գյումրի 2023»

Ճարտարապետամշակութային ՀԿ»

Հասցե՝ Արամի փ., շ. 92, 19 բն., Երևան

Գործ. Յաւց: Արամի փ., շ. 92, 19 բն., Երևան

૩૫૩૩` 02877286

Բանկ՝

3/3`

Հեռ.՝ 091-58-45-01

E-mail` mashito@gmail.com

Տնօրեն՝ Մարիամ Արշակյան

Ն՝ Մարիամ Արշակյան



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՄԵԴՍ ԳՅՈՒՄՐԻ 2023 ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Կողմ 1), մի կողմից, և «Մեդս Գյումրի 2023 ճարտարապետամշակութային» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «Կողմ 2»), մյուս կողմից, հաշվի առնելով Գյումրի քաղաքի մշակութային գրավչության բարձրացման, Գյումրու՝ որպես զբոսաշրջային ուղղության, ինչպես նաև բարենպաստ ներդրումային դաշտի ապահովմանը միտված համագործակցության հանդեպ փոխադարձ հետաքրքրությունը, նպատակ ունենալով Գյումրի քաղաքում իրականացնել կրթամշակութային բնույթ կրող ծրագրեր, կնքեցին համագործակցության վերաբերյալ սույն հուշագիրը հետևյալի մասին.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա) Համագործակցության վերաբերյալ սույն հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) առարկան արտահայտում է Կողմերի մտադրությունը՝ փոխօգնության և փոխըմբռնման սկզբունքների հիման վրա, Գյումրի քաղաքի պատմամշակութային առանձնահատկություններն ու ազգային նկարագիրը հաշվի առնելով՝ իրականացնել քաղաքի բրենդավորմանը, զբոսաշրջային գրավչությանը, տեղական արտադրողների արտադրանքի հանրահռչակմանը, քաղաքային մշակույթի զարգացմանը, համայնքային տրանսպորտի կանգառների պայմանների բարելավմանը միտված ծրագրեր՝ կիրառելով այնպիսի գործիքակազմ, որը կարտահայտի Կողմերի փոխադարձ կամքը:

Բ) Սույն հուշագրից բխող ցանկացած միջոցառման և (կամ) ծրագրի իրականացման ուղղությամբ Կողմերի համագործակցությունը կկարգավորվի միմյանց միջև կնքված համաձայնագրերով՝ սահմանելով համագործակցության կոնկրետ դեպքի կապակցությամբ Կողմերի փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները:

Գ) Համագործակցության սույն հուշագիրը Կողմերի համար առաջացնում է պարտավորություններ, իսկ յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների շուրջ Կողմերի համաձայնությունը կարտահայտվի լրացուցիչ համաձայնագրի միջոցով:

Դ) Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հաստատում են, որ սույն համագործակցության հուշագիրը համարվում է համատեղ գործունեության իրականացման պայմանագիր:


Ե) Կողմերը հավաստիացնում են, որ հրապարակային ելույթներում, մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում միմյանց միջև համագործակցության վերաբերյալ տեղեկությունները կհանրայնացնեն նախապես համաձայնեցված ձևաչափով և բովանդակությամբ:

Ի հավաստումն վերոնշյալի՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչները 2022 թվականի դեկտեմբերի 20 - ին ստորագրեցին սույն Հուշագիրը.

ԿՈՂՄ 1

Գյումրու համայնքապետարան
Հասցե՝ ք. Գյումրի,
Վարդանանց հրապարակ 1
gyumri@gyumri.am

Համայնքի ղեկավարի օգնական
Արման Շաբոյան




ԿՈՂՄ 2

«Մեդս Գյումրի 2023»
հասարակական
կազմակերպություն
Հասցե՝ ք.Երևան, Արամի փ. 92 շ.,
19բն.

meds.armenia@gmail.com

ՀԿ Նախագահ
Մարիամ Արշակյան



**ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝
Վարդգես Սամսոնյանին
Դիմող՝ «Մեդս Գյումրի 2023 ճարտարապետամշակութային»
հասարակական կազմակերպության նախագահ՝
Մարիամ Արշակյանից
/ հեռ.՝ +374 91 584501, էլ. փոստ՝ med.sarmenia@gmail.com/**

Հարգելի՛ պարոն Սամսոնյան,

Հիմք ընդունելով Գյումրիի քաղաքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավարի օգնական Արման Շաբոյանի և «Մեդս Գյումրի 2023 ճարտարապետամշակութային» ՀԿ-ի նախագահ Մարիամ Արշակյանի միջև դեկտեմբերի 20, 2022թ.-ին ստորագրված հուշագրի, ակնկնալուծ ենք Ձեր ֆինանսական աջակցությունը ծրագրի իրականացման գործում, և խնդրում ենք առաջիկա ավագանու նիստում քննարկել ծրագրին մասնակի ֆինանսական աջակցության տրամադրման հարցը, այն է մասնակիցների կացության ծախսը /կից ուղարկում ենք «Գյումրի» հյուրանոցի հետ կնքված պայմանագիրը բոլոր մանրամասներով: Ծրագրի իրականացման համար նախատեսված ընդհանուր գումարը կազմում է մոտ 50.000.000 ՀՀ դրամ:

Ձեզ ենք ներկայացնում MEDS /Meeting of Design Students/ Workshop միջազգային ծրագիրը և դրա տարեկան սեմինարները, որ տեղի է ունենում ամեն տարի տարբեր երկրներում: Այս տարվա աշխատարանը, առաջին անգամ, կհյուրընկալի Հայաստանը՝ որպես մրցույթում շահող երկիր: Միջազգային սեմինար /աշխատարանը/ նախատեսված է տարբեր երկրներից ժամանած 150 մասնակիցների համար, որը տեղի կունենա Գյումրի քաղաքում՝ 2023 թվականի օգոստոսի 1-20-ը: Ծրագրի շրջանակներում մասնակիցները 20 օրերի ընթացքում իրականացնում են ինչպես ֆիզիկական նախագծեր /ճարտարապետական փոքր ձևեր, քաղաքային ինստալյացիաներ/, այնպես էլ թվային նախագծեր /լուսանկարչական, վիզուալ մշակումներ/, որոնք ծրագրի ավարտից հետո պահպանվում են տվյալ քաղաքում:

Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում, MEDS սեմինարները համակարգվում են երիտասարդ մասնագետների կողմից ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության շրջանակներում: Աշխատարանների /սեմինարների/ իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցներ, որի մի մասը գոյանում է մասնակիցների անդամավճարներից, մյուս մասը՝ հյուրընկալող երկրի կողմից՝ հովանավորների աջակցությամբ:

Որպես MEDS-ի այս տարվա կազմակերպչական թիմ՝ մենք սերտորեն համագործակցում ենք Հայաստանի էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության, Քաղաքաշինության կոմիտեի, Ճարտարապետների

Պալատի, Բուն Թիվիի, ինչպես նաև ոլորտի միջազգային առաջատար պարբերական՝ Archdaily-ի հետ, որոնք աջակցում և հովանավորում են այս միջոցառումը:

Ծրագրի մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://medsworkshop.com/meds-workshop-2023-gyumri/>

Ծրագրի շրջանակներում նախորդ տարիներին իրականացված նախագծերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://medsworkshop.com/>

Մրցույթը հայտարարված է նաև ճարտարապետական ոլորտում առաջատար ArchDaily պարբերականում՝ <https://www.archdaily.com/997770/meeting-of-design-students-participant-open-call>

Մենք լիահույս ենք, որ ձեզ հետ, վերոնշյալ ծրագրի շրջանակներում կգտնենք համագործակցության եզրեր:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, խնդրում ենք կապվել մեզ հետ՝

Էլ. Հասցե՝ meds.armenia@gmail.com

Առդիր՝ 7 էջ

Նախագահ՝

Մարիամ Արշակյան

